



52. ԳՐԻՔՈՐԻ ԽԵԶԸԹԸ

Ժուկով-ժամանակով Թավրեղ քաղաքում ապրում էր մե հայ վաճառական: Էս վաճառականն ուներ իրեք տղա, մեծը՝ Ռաշիդ, միջնեկը՝ Սհագ, պստիկը՝ Գրիքոր անունով: Վաճառականը շատ էր ծերցել, էտ պաճառով էլ առտուրի գործը հանցնել էր մեծ տղին՝ Ռաշիդին, միջնեկ տղեն զբաղվում էր տնային գործով, պստիկը տասնըինդ տարեկան էր, ոչ մե գործ չէր անում, հիրա քեֆին ազատ ման էր զալում:

Մե օր էրկու մեծ ախազերը խորուրթ են անում:

Ռաշիդը Սհագին ասում ա. — Սհագ, մենք ախշատում ենք, մեր խերն ու ախազերը ձրի ուտում են, լավ չի՞ հընի բաժնվենք, թո ամեքը հիրա աբրուստի տերը դառնա:

Սհագն ասում ա. — Ես շուտ ի ուզում ասեմ, հըմա քցում ի էսօր-էքուց: Դու էթաս զանազան երգներ, վտանգի ենթարկվես, մե քանի կոպեկ ախշատես, ես տան բոլոր գործերը կատարեմ, վերչը բերենք չորսը տեղով ճիսենք: Արի հէսօր էթանք մեր խոր մոտը, ասենք, որ բաժնվում ենք, թո բաժնա, որը իմալ կարի, թո արրի:

Գացին խոր մոտը, ասին, որ բաժնվում են:

Խերն ուզում էր ասա՝ չէ, մեկ էլ մտածեց, թե. «Ո՞նց ասեմ չէ, մե տեղ, որ իմ ու քո հընգավ, խարամ ա էտ տեսակ աբրուստո», ասավ. — Բալե՛ք ջան, որ ուզում եք բաժնվեք, բաժնվեք, հիրկուն նստենք, խորուրթ անենք, աբրանքը ճիսենք:

Հիրկուն սկսում են աբրանքը բաժնեն, հըմա ինչ տեսակ ճիսում են, վեց ա հառաջանում:

Վերչը պստի տղեն՝ Գրիքորը, ասում ա. — Ընձի խոսկ կըխաս-նի՞, թողեք մե բան էլ ես ասեմ:

Էրկու ախազերը նեղանում են, ասում են, որ քո խելքի բանը չի աբրանք ճիսել, հըմա խերն ասում ա. — Ա՛յ տղերը, Գրիքորն էլ ա ախազեր, թո մե բան էլ էնի ասա, բալե մե խելոք բան ա ասում:

Տղերքն ասում են՝ թո ասա:

Գրիքորն ասում ա. —Ախապերնե՛ր, մեր ունեցածը ես բաժնում եմ էս տեսակ. ունեցած աբրանքը ու փողը մե ախապորը: Տները մե ախապորը, մեր խերն էլ մե ախապորը: Հառաչ դուք վերցրեք, ինչ ուղում եք, որը մնա, էն էլ ընձի, համաձա՞յն եք:

Ռաշիդն ասավ. —Ես առտուրական եմ, ընձի փող ա պետք:

Մշագն ասավ. —Ես տան գործերով եմ զբաղվում, ընձի տները:

Գրիքորն ասավ. —Ընձիկ էլ իմ խերը:

Մշագն ասավ. —Էս տունն իմն ա, դե հելեք գացե՛ք:

Գրիքորն ու խերը հելան գացին: Քշեր էր, գացին հարևանի տունը մացին, հառավոտ հելան հընդան ճամբա, գացին Սպահան քաղաքը: Նատ գացին, թե չիչ, մե օր էլ ճեսօրին խասան Սպահան, մե դուքնի դռան մոտ նստան:

Էս վաճառականը ամոթու չորերը փոխեր էր, խին չոր էր խաքե, որ ճանչնող չըհընի: Նստան չընի հիրկուն: Հիրկուն բոլոր դքընները փագին գացին:

Էս դուքնչին մոտցավ, ասավ. —Ախապե՛ր մարթ, ես տենում եմ ճեսօրից չընքի հիմի էրկսով նստեր եք իմ դուքնի հառեչ ու վեր չեք կենում, խո մթկներիտ բան չըկա, թե՞ ծանոթ չունեք:

Էստեղ էս վաճառականն ասավ. —Մանոթ չունենք:

—Դե որ ծանոթ չունեք, ես ձեզ ծանոթ, —ասավ դուքնչին, —էթանք իմ տունը: Ղոնախը, որ կա, Աստծունն ա, էսօր իմ դոնախն եք, իմ աշկի, իմ զլսի վրա տեղ ունեք, համեցե՛ք, էթանք:

Խեր ու տղա հելան սուսուփուս հընդան էտ դուքնչու հետեից, գացին ըստու տունը:

Դուքնչին խորն ու տղին լավ պատվեց, նստան շատ խոսացին հիրանց զլսի էկածից:

Էս դուքնչին տեսավ, որ դանախը շատ վառվուկ ա, ասավ. —Զայրի՛կ ջան, զու մե դարդ ունես, ասա տենամ ի՞նչ ա քո դարդը, զուցե դարման անել կանամ:

Վաճառականն ասավ. —Իմ դարդին դարման չի հըլնի, իմ սիրտը վառվուկ ա:

Տանտերը՝ դուքնչին շատ խնդրեց, էս մարթն ասավ. —Ախապեր ես, թե որդի ես, չեզի ասեմ իմ դարդը: Ես էս վաճառականն եմ, կարող ա իմ անունը լսեր ես, էս օյինն իմ տղերքը հանին իմ զլոխը, ըստու խըմար էս սիրտս վառվուկ ա:

Դուքնչին էս վաճառականին ճանչցավ, շատ մեղադրեց տղերքին, հըմա ի՞նչ կաներ անի:

Դուքնչին կնդան ասավ. —Ա՛յ կնիկ, ի՞նչ անենք:

Կնիկն ասավ. —Մա՛րթ, քո գործն ա, ինչ ուղում ես, արա:

Դուքնչին ասավ. —Մե բան ասեմ, չընեղանասա:

Ղոնախն ասավ՝ ասա՛:

Դուքնչին ասավ.—Ես մինակ տղա եմ, ոնչ խեր ունեմ, ոնչ ախ-պեր, դու ընձի խեր, էս տղեն էլ ընձի ախսեր:

Խեր ու տղա համաձայնվան ու մացին էս դուքնչու տանը: Հըն-ցավ իրեք ամիս: Դուքնչու կնիկը ծերունուն շատ լավ էր հիշկում: Շորերը ժամանակին լվալ էր տալում: Ճաշը ժամանակին խաց-նում էր, մե խոսկով հիրա հարազատ խոր նման պախում էր: Տղին՝ Գրիգորին էլ էր լավ հիշկում: Փող էր տալում, որ բան-ման առնի, ինչ սիրտն ուզա, ոչ մե բանի կարոտություն չըքաշա:

Մե օր էլ, եփ խերը-տղա տանը մինակ մացին, խերը տղին ասավ.—Գրիգո՞ր ջան, էս իրեք ամիս ա, մենք էս մարթի տանն ենք: Ի՞նչ անենք, որ լավ մարթի ենք հուստ եկե, դու ջահել տղա ես, գնա մե ախշատանք քթի, դու էլ աշխատա՛, ամոթ ա էրկով էլ պարապ նստենք:

Տղեն համաձայնվավ ու առավոտ վեր կացավ, գնաց քաղա-քի շուկան: Շատերն էկան ֆայլա բոնին, տարան, հըմա էս տղեն պստիկ էր, տարող չըհելավ:

Գրիգորը հիրկուն թողեց փոր փոշման էկավ տուն:

Խերը խառցուց.—Ի՞նչ արիր, Գրիգո՞ր, գործ ճարի՞ր:

—Զէ՛, հայրիկ, էկան, հիշկացին վրես, թողին գացին, ասում ին՝ «էրեխա յա»:

—Բան չըկա, —ասավ խերը, —հէքուց էլ գնա՛:

Տղեն էտ օրն էլ գնաց, էլի հառաչի օրվա նման: Երորթ օրն էլ գնաց:

Էս օրը Գրիգորին մոտցավ մե ծեր մարթ, ասավ.—Տղա՛ ջան, ֆայլա՞ ես:

—Խա՛, պապե՛ ջան, գործ կա՞։ Կզամ:

Բիձեն տղին տարավ քաղաքից գուս, մե մաղուռ կար:

Էս մաղուռի մոտ տղին ասավ.—Տղա՛ ջան, էս մաղուռի պահա-կը ես եմ, էսօր գործ ունեմ, տեղ եմ էթում, կրմնաս էտեղ, հիրկուն ես կրգամ, հախտ կըտամ, կէթամ:

Տղեն նստավ չանքի հիրկուն: Մութն հընգավ, բիձեն չըկա: Նստավ ու քունը տարավ, քնավ:

Տղեն քնուկ էր, էյրագ էկավ:

Էյրագին էտ բիձեն ասավ.—Գրիգո՞ր ջան, քո պարկած տեղը, որ փորես, ոսկի կա, կըհանես, կըտանես, դու էլ, խերտ էլ կապրեք:

Գրիգորը զարթնավ, տեսավ՝ Բափել չըկա:

Մտավ մաղուռը, տեսավ, մե բախ կա, բախը վերցուց, էկավ, սկսեց փորել: Մեշու փորեց, թե չէ, բախը մե պինդ բանի առավ: Ջեռ տվեց, տեսավ կարասի բերան ա: Ջեռով խողը մե յան տվեց,

ձեռը կոխեց կարասը, տեսավ լինքը ոսկի յա: Մե ճանգ ոսկի խանեց, լցեց ջերը, խողը տվեց տեղը, հելավ գնաց տուն: Տնացիք հիրար ին խառնվե:

Դուքնչին ու հիրա կնիկը բանից խաբար չին, խորն ին խառցնում, խերն ասում էր.—Ես էլ չեմ հիմանում, թե հուր ա գացե:

Հըմա էտ վախտը տղեն ներս մտավ: Տնացիք շատ ուրիսցան, որ էկավ: Խարցորին պաճառը, տղեն հըմմեն դուզն ասավ, վեռչն էլ ջերից խանեց ոսկին, լցեց ստոլի վրեն: Խերն ու դուքնչին մացին շիվար:

Որոշին էրկու մեշոք վերցեն, էթան ոսկին բերեն: Գացին մե կարասը դառտկին բերին, հըմա տեսան՝ էլի կողը մե կարաս կա: Էտ էլ դառտկին, տեսան՝ էլի մե կարաս կա: Էս տեսակ օխտը կարաս դառտկին: Սաղ քշեր չըքնան, չընքի լուս կրին, պրծան:

Ոսկին որ բերին տուն, խերը դուքնչուն ասավ.—Դու իմ ջոջ որդին ես, Գրիքորը պատեկ ա: Էս ոսկին դիր առըտուրի մեշ ախշատա՛, էս մե կարաս ոսկին էլ ծախսա՛, էտ մադուրի մոտ մե մեծ վանք շինա՛: Էս ոսկին Աստծու տված է, մե մասն էլ ծախսենք աստվածային նպատակով, թե չէ ազահությունը լավ բան չի:

Դուքնչին ասավ.—Այ խեր, ես էտ փողին ձեռ չեմ տա, էտի իմ պատի ախապոր բաժինն ա, պախենք, թու մեծնա, առտուր անա, աբրի, ինչ վերաբերվում ա վանք շինելուն, ես հէքուց կըսկաեմ էտ աշխատանքը: Մե քանի փողրաթչի կըքմնեմ, հախները կըտամ, թու շինեն:

Խերն ասավ.—Բալա՛ ջան, էստեղ իմ ու քո չըկա, ինչ որ ունենք, ձեր էրկու ախապոր հավասար բաժինն ա, մեծը դու ես, ղեկավարա՛:

—Լա՛վ, —ասավ դուքնչին ու սկսեց վանքի շինարարությունը: Մե քանի ամսվա մեշ վանքը պաղրաստեցին, զլիսին էլ մե ոսկե խաչ տնզեցին, վարթապետներ, տերդերներ, տիրացուներ կանչեցին, ժողովուրթը սկսեց էթալ էս վանքը:

Վանքի շինարարությունը վերջացնելուց հետո սկսում են մե ամարաթ էլ կառուցել Գրիքորի խըմար:

Պալատն էլ կառուցին: Հընցավ իրեք տարի: Էս քաղաքի թաքավոր Սուլյմանը մեռավ: Բերին Դովլաթ դուշ բաց թողին: Դովլաթ դուշը էկավ նստավ Գրիքորի զլիսին:

Իշխանները չուզին, ասին: —Մենք էս էրեխին չենք ենթարկվի:

Նորից դուշը բաց թողին: Էլի էկավ նստավ Գրիքորի զլիսին: Էլի զալմաղալն հընգավ: Գրիքորին տարան մե մարաք, քցին մութ տեղ: Դովլաթ դուշը երորթ անքամ բաց թողին: Գնաց, պտտաց, պտտաց, տեսավ Գրիքորը ժողովրթի մեշը չի, սկսեց դես-դեն ման դա:

Նատ ման էկավ, վեռչը մարաքը քթավ, ճանգերով տանի-սը քանդեց, մտավ ներս, նստավ Գրիքորի զլիխին: Էս անքամ ժո-ղովուրթը ղալմաղալ արավ, թե մենք էլ հուրիշ թաքավոր չենք ուզում, կա-չըկա, մեր թաքավորը Գրիքորն ա: Բերին Գրիքորին առոք-փառոր թաքավոր դառցրին:

Ըստու ետո դուքնչին դառցավ էս քաղաքի հառաջին վաճառա-կանը: Թաքավորի տունը թաղած վանքին մոտ էր: Ամմեն օր խերը էթում էր վանքը, հիրա աղոթքն անում էր, վանքից դուս գալուց ետո ամմեն ախկատին մե ոսկի էր տալում, չանքի խասնում էր տունը:

Ըստոնք թո մնան ըստե, հիրանց չեֆն անեն, մենք խաբար տենք տունը մացած էրկու ախպորից՝ Ռաշիդից ու ՍՀագից: Խոր գնալուց ետո ըստոնց էրկու ախպոր գործը թարս գնաց: Մե օր ձինն ին գող-նում, մե օր՝ եզը, մե օր կովի ոտն էր կողրվում, մե օր դուքանն ին թալնում: Մե խոսկով, մե տարփա մեչը սաղ հարստութունը շանը-գելի բաժին հելավ գնաց: Էրկուսն էլ ախկատացան, դառցան ժո-վոխիրան, հընդան քուչեքը: Տները ծախին, էրկու ախպորը մնաց մե քոխտիկ, էտ քոխտիկի մեջ ին աբրում:

Էս ախպերները լսացին, որ Սպահան քաղաքում թաքավորի խերը հիրկուն ժամից դուս գալուց ետո ամմեն ախկատի մե ոսկի ա-տալում, չանքի խասնում ա հիրա պալատը:

Ռաշիդը ՍՀագին ասավ.—ՍՀա՛գ, դու մա՛ց տունը, ես էթամ Սպահան, կարող ա բախտս կղբա մե տաս օր էթամ վանքի դուոր: Որ տասը ոսկի ստանամ, կըբերեմ, կըդնենք առըտուրի մեջ, գուցե բախտներս կղբա, նորից լավ աբրենք:

ՍՀագը համաձայնվավ, մնաց տունը, էրկսի հընդանիքը պախս, Ռաշիդը բռնեց Սպահանի ճամբեն:

Ռաշիդը գնաց խասավ Սպահան, քթավ թաղած վանքը ու գնաց դռան մոտ նստավ:

Հիրկուն թաքավորի խերը գնաց վանքը, հիր աղոթքն արավ, դուս էկավ, ճամբի էրկու յանն էլ ախկատները շարքով նստեր ին: Նստողների մեջն էր Ռաշիդը: Նա բոլորին մեկ-մեկ ոսկի տվեց, իսկ Ռաշիդին այդ օրը ոչինչ ըրտվեց: Ռաշիդը խորը չըճանչցավ, հըմա խերը Ռաշիդին ճանչցավ: Ռաշիդը, որ տեսավ ոսկի չըտվեց, հե-լավ, հետեկից վագավ, ձեռոր պարզեց, նորից ողորմութուն ուզեց:

Խերն ասավ.—Հետեկիցս արի՛:

Ռաշիդը ետեկից գնաց մտավ պալատը:

Որ մտավ պալատը, կանչեց թաքավոր տղին, ախպորը նշանց տվեց, հըմա ախպերներն հիրար չըճանչցան:

—Էս մարթն ո՞վ ա, —հարցրեց Գրիքորը:

Հերն ասավ.—Լա՛վ հիշկա, կըճանչնաս:

Գրիփորն հիշկաց, հիշկաց, ախպորը ճանչցավ, փաթթվավ վզով: Էրկու ախպերն էլ, խերն էլ սկսին լալ: Ռաշիդը քարացել էր, տենալով խորն ու ախպորը: Մտկով չար բան հընցավ: Նա մտածեց, որ անպաճառ խերս մեզնից գոխտուկ ոսկի յա պախե, որ էսքան հարուստ են: Լա՛վ, հըլա կըտենանք:

Գրիփորը լալում էր, որ հինքը թաքավոր ա, հիրա ախպերները ժովուսկրան են: Բա էլ ի՞նչ ախպերութուն, որ մեկը հարուստ հըլնի, մեկը՝ չասիր:

Խերը խառցուց Ռաշիդին, թե ո՞նց պատահավ, որ էտքան ախկատացան, տղեն մանդրամաս պատմեց հիրանց գլխի էկածը: Խերն էլ պատմեց հիրանց գլխի էկածը: Ռաշիդին լավ շոր առան: Սհագին և էրկու ախպոր հընդանիքին լավ շորեր առան, փող տվին, հզրկեցին Թարվեզ, որ էթա հմմնին բերա Սպահան, բոլորը մե տեղ աբրեն, ոսկի շատ ունեն:

Ռաշիդը էկավ տուն, տեսավ ախպերը խիվանդ ա, անոթի թուլցեր ա: Շորերը տվեց, ուտելիք առավ, մե քանի օր պաղբաստվան ու ճամբա հընդան դեպի Սպահան: Սպահանում խերն ու ախպերը հիրանց խառներին ու էրեխսեքին լավ ընթունեցին, լավ օթաղներ տվին, նվերներ տվին, ուրիշցան:

Որ տեսան հընդանիքը հավաքվավ, ախպերները պահանջին, որ Գրիփորը ամուսնանա: Գրիփորին մե լավ ախճիկ ուզին, օխտ օր, օխտը քշեր խառնիս արին, խառը տուն բերին: Թաքավորի խերը խառնից ետո մեռավ, արելք բաշխեց ձեզի:

Մե տարի ետո Գրիփորին մե տղա հելավ: Խորոխպերները շատ ին սիրում էրեխին: Ըտոնց գործն էն էր, որ ամրոխմ օրը էրեխին հիրանց թեմերի վրա ին խախճնում:

Տղեն դառցավ մե տարեկան:

Մե օր էլ Ռաշիդի ու Սհագի կնիկը խորութ են անում՝ էրեխին մորթեն: Էտենց էլ անում են: Էրեխին մորթում են, դանակը դնում են մոր ջերը:

Հառավոտը վեր են հըլնում, տենում են էրեխեն մորթուկ: Վայ-փայն հընդան ա պալատը: Թաքավորը մորթուկ էրեխեն կապում ա մոր դոչից ու դուս ա անում:

Խեխմ կնիկը էրեխեն վերցում ա, հընդնում մեշեքը:

Մեշի մչով էթում ա, էթում, տենում ա մե տեղից ծուխ ա բանցրանում: Էթում ա թբա ծուխը: Ծխին չըխասուկ մե պստի հառու յա պատահում, մտածում ա էրեխի արունները լվա, մե փոս փորա, էրեխեն թաղա, ետո էթա տունը, տենա որը կա: Էրեխեն դոչից հառցկում ա, դնում ա ջետինը, կղուուկ տեղը լվում ա, մեկ էլ տե-

նում ա էրեխեն աշկերը բացեց: Մերը ուրախութունից լավում առ տղին էտ ջրով լողացնում:

Տղեն հընում ա, նստում, մոր խետ խաղում:

Մերն էրեխին փաթթում ա, շկում ու դուզը էթում ա ծխի յանը: Տեսում ա մե սիրուն, էրկու հարգանե պալատ ա, հայաթի դուան մոտ էրկու շուն ա նստուկ: Շները, որ մորն ու տղին տեսնում են, դուան մոտից հընում են, էթում են մե յան: Մեր ու տղա ներս են մտնում, տանտերը շատ լավ ընթունում ա, էստեղ աբրում են:

Հընցնում ա մե ժամանակ, թաքավորը կնգա խըմար շատ տիրում ա, ասում ա. «Էս ինչ բան էր, ես արի: Առանց քննելու, առանց խաղցնելու խեխճ կնգան դուս արի, մեռելն էլ տվի ձեռը: Բա էս հելավ արթարութո՞ւն, էս բանը Աստված կըվերցնա՞»:

Մտածեց, մտածեց, գահը հանցնեց փազրին, հելավ հընգավ ճամբար, դուզը մեշեն: Թաքավորն էլ ծուսը տեսավ ու գնաց ծխի յանը: Հիրկուն ախպերներն էկան տուն, գացեր ին ման գալու: Վազիրը պատմեց, թե հընչի ա թաքավորը գնացե:

—Վայ, վայ, —ասին ախպերները: —Մեր թաքավոր ախպերն էթա հիրա մեռելը լա, ման զա, մենք տունը նստե՞նք: Էլ ի՞նչ ախպերութուն: Քերով հելան խաղցրին՝ ախպերը որ յանն ա գնացե, հընգան ճամբար: Կնանիքը մացին չանքի լուս, տեսան հիրանց մարթիքը գացին, չեկան, հիրանը էլ էրեխեքը թողին տուն, հելան հընգան ճամբար, հիրանց մարթիքին ման գալու:

Էսենց հիրար հետևից գացին, գացին, խասան էնտեղ, տեսան որտեղից ծուխ ա դուս գալում:

Թաքավորը գնաց, խասավ էտ տանը, տեսավ հիրա կնիկը էրեխեն ձեռին թոցնում ա: Մնաց շիվար:

«Էս կնիկը, որ էրեխեն մորթող հըներ, հիմի հընչե՞ր խախցնում, ուրեմն մեղավորն իմ կնիկը չի»:

Ծները, որ տեսան թաքավորը գալում ա, դոնից եռացան, թաքավորը գնաց, հընգավ կնգա ուսները, ասավ.—Ես արի, դու մի՛ արա:

Կնիկը մարթին բանցրցուց, թե թեկի տվին, գացին տունը: Տնաւերը շատ ուրխցավ:

Հառավոտ տեղ խասան ախպերները, հիրկուն էլ՝ ախպերների կնանիքը: Թաքավորն ուզեց դատ անել:

Տանտերն ասավ.—Թաքավո՞րն ապրած կենա, իրավո՞ւնք տուր, ես դատ անեմ:

Թաքավորն իրավունք տվեց:

Տանտերը կանչեց շներին, ասավ.—Զանգի՛, Զրանգի՛, քթե՛ք էրեխեն սպանողին:

Շները թուան, մեկը բռնեց մե ախաղոր կնգան, մեկը բռնեց մեկէլ ախաղոր կնգան:

Տանտերն ասավ.—Թաքավո՞րն ապրած կենա, հես են քո էրեխեն սպանողները:

Թաքավորը մտածեց, ձեն չարավ:

Ուաշիդը վեր կացավ, ասավ.—Ի՞մ թաքավոր ախաղեր, ես քո մեծն եմ, իրավո՞նք տուր, տաս րոպե ես դառնամ թաքավոր:

Թաքավորն ասավ՝ իրավունք ա:

Ուաշիդը տանտիրոջը պատմեց, թե հիրանք իշքան վատութուն են արե հիրանց խորն ու ախաղոր, իսկ խերն ու ախաղերը իշքան ներող են հելել:

Կտրանից հետո էս անսկամները մորթեցին անմեղ էրեխին: Բոլորը նախանձից են արե:

Ես հրամայում եմ էրկուսին էլ բալթով կտոր-կտոր անեն, թալեն չներին:

Տանտերն ասավ.—Թաքավորի՝ ախաղեր, իմ չները մարթի միս չեն ուտում, հրմա, եթե իրավունք ա, չները դատաստան կանեն:

Ասավ՝ էտ իրավունքը տալում եմ:

Տանտերը չներին աշկով արավ: Շները կնանիքի բոզից բռնին, խեխտին, չպրտին:

—Իմ թաքավորութունը վերչացավ,—ասավ Ուաշիդը:

Ըստոց ետո հելան տանտիրոջն էլ հրավիրեցին, էկան պալատը: Էրեխին կնքին: Մեշի միշի տանտերը հելավ քավոր: Երգնքից հընգավ իրեք խնձոր, իրեքն էլ տվին էն էրեխին:

